Իրավ 658-Ա/2

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 539
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «13» «12» 2019 թ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, մի կողմից, և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրենի պաշտոնակատար Շ. Միրզախանյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել 2019 թվականի դեկտեմբերի 13-15-ը «Կինոարտադրողների համահայկական ֆորում» նախագծի կազմակերպման ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (հավելված N 1) և ծախսերի նախահաշվի (հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թ. սեպտեմբերի 16-ի N 658-Ա/2 հրամանի՝ հինք ընդունելով «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով իրականացվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Կինոարվեստի ստեղծագործական միջոցառումներ» անվանակարգի մրցութային հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 6-ի նիստի արձանագրությունը՝ հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Կինեմատոգրաֆիայի ծրագրի» «Աջակցություն կինոարվեստին» միջոցառման «Միջազգային կինոփառատոներին, կինոշուկաներին և կինոնախագծերին մասնակցություն, ուսումնակրթական ծրագրերի իրականացում, եվրոպական աուդիովիզուալ օբսերվատորիային անդամակցություն» տողով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին:

2.1.2. Պայմանագրի 2.3.7-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, քննարկել և Կատարողին ներկայացնել նախահաշվում փոփոխություն կատարելու կամ նոր ծախսային ուղղության ամրագրում կատարելու կամ դրանց կատարումը մերժելու մասին իր եզրակացությունը:

2.1.3. Պայմանագրի 6.1-ին կետում սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունը, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. *Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.2.1.Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կապարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝ նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները:

2.3.2. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին:

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված աշխատանքի մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը՝ կցելով էլեկտրոնային կրիչներ՝ լուսանկարներ, հրավիրատոմսեր և այլն):

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պատվիրատուի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի մեկ տոկոսի չափով:

2.3.5. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով:

2.3.7. Պայմանագրի գործողության ընթացքում, մինչև փաստացի ծախսերի իրականացումը, Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված գումարի 10 տոկոսը գերազանցող ծախսային ուղղությունների գումարների փոփոխությունների կամ նոր ծախսային ուղղության ամրագրման անհրաժեշտություն առաջանալու դեպքում (չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը), այդ մասին գրավոր առաջարկություն ներկայացնել Պատվիրատուին:

2.3.8. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով և նախահաշվով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4. Կապարողը իրավունք ունի՝

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է **8851.9** (ութ միլիոն ութ հարյուր հիսունմեկ հազար ինը հարյուր) հազար դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն հավելվածի 2:

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է իր բանկային հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ 5 բանկային օրվա ընթացքում:

3.3. Համաձայն «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

4.2. Մինչև Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների հանձնման- ընդունման արձանագրության ստորագրումը Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի Պայմանագրի կատարմանն ուղղված՝ իր կողմից փաստացի կատարված ծախսերի վերջնահաշվարկը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով:

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ

ստանալ Պայմանագրի 3.1.-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը:

5.4. Պայմանագրի 1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պատվիրատուին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում վերջինս Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 16-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2020 թվականի հունվարի 25-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2020 թ. փետրվարի 10-ը:

9.2. Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է 2019 թ. նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Պայմանագիրը կազմված է 11 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

10.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

11. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024313 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար

Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271
Տնօրենի պաշտոնակատար՝

Շ. Միրզախանյան

Կ.Տ.

Հավելված
13 12 2019 թ.
N 539 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ
«Կինոարտադրողների համահայկական ֆորում» նախագծի

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Երևան 0088, Աշտարակի խճուղի 30
3	Ծրագրի անվանում	«Կինոարտադրողների համահայկական ֆորում»
3.1	Բովանդակություն	Կինոարտադրողների համահայկական եռօրյա ֆորումի շրջանակներում կքննարկվեն մի շարք հարցեր Հայաստանում կինոոլորտի զարգացման գործընթացի վերաբերյալ: Ֆորումի մասնակից՝ օտար երկրներում հաստատված և կայացած հայազգի անվանի պրոդյուսերները կհանդիպեն Հայաստանում կինոոլորտի պատասխանատուների, կինոարտադրողների, կինոգործիչների հետ, ինչպես նաև կմասնակցեն տարածաշրջանում ֆիլմարտադրության, միջազգային համագործակցության, մասնագիտական մրցունակության, արտադրանքը միջազգայնացնելու և տարածելու խնդիրների քննարկումներին: Մասնակից պրոդյուսերները կներկայացնեն միջազգային կինոարտադրության մոդելները, համագործակցության հնարավոր պայմանները, պետության, ինչպես նաև անկախ արտադրողների գործնական քայլերը՝ այդ համագործակցությունները իրականացնելու համար: Ֆորումի ընթացքում կհստակեցվեն նաև, թե ի՞նչ միջպետական պայմանագրեր են պետք օտարերկրյա համարտադրություններ իրականացնելու համար, ի՞նչ ճանապարհներ կան հեղինակավոր փառատոներին և կինոհարթակներին մասնակցելու համար և ի՞նչիսի պոտենցիալ են տեսնում այսօր Հայսատանում կինոարտադրությունը զարգացնելու համար: Հայաստանում կինոոլորտի պատասխանատուները կներկայացնեն կինոարտադրության ներկա ռազմավարությունը և թե ինչ կարող է առաջարկել Հայաստանը համատեղ արտադրության և ֆիլմերի

		տարածման գործում: Եռօրյա ֆորումի շրջանակներում մեկ օր կներկայացվեն 2019 թվականին պետական աջակցություն ստացած զարգացման և արտադրական փուլի կինոնախագծերը՝ նոր գործընկերներ գտնելու ակնկալիքով, ինչպես նաև հայկական պատմությունների միջազգայնացման նպատակով: Հայաստանցի կինոգործիչները կներկայացնեն իրենց նախագծերը, յուրաքանչյուրը 5-10 րոպե, կլսեն հարցեր և կստանան խորհրդատվություն: Նախագծերը կներառվեն նաև կատալոգում և կբաժանվեն մասնակից հյուրերին՝ հետագա համագործակցության ակնկալիքով: Կկազմակերպվի նաև քննարկում՝ ինտերնետ պորտալ ստեղծելու հնարավորությունը՝ որպես դիստրիբյուցիոն օղակ: Կքննարկվի Համահայկական Կինոարտադրողների Ասոցիացիա ստեղծելու անհրաժեշտությունը, որը կնպաստի հայաստանյան կինոարտադրողներին ինտեգրվել միջազգային կինոցանցին: Ասոցիացիան, որպես կառույց կարող է մասնակցել Հայաստանում կինոնախագծերի ընտրության գործընթացին և խթանել օտարազգի հեղինակների հետ համամարդկային ասելիքով նախագծեր ստեղծելու հնարավորությունը: Կառույցն իր ռազմավարությամբ կարող է նպաստել նաև հայաստանյան երիտասարդ կինոգործիչների միջազգային կրթության, կինոտեխնիկայի վերազինման, Հայաստանում գործող կինոոլորտի մասնագետների վերապատրաստման հարցում: Ինչպես նաև կարող է խթանել միջազգային հեղինակավոր պարբերականներում հայկական կինոարտադրության լուսաբանման գործընթացը, կինոփառատոններին, կինոշուկաներին և մասնագիտական միջազգային այլ ծրագրերին մասնակցության հարցերը: Ծրագրի շրջանակներում կկազմակերպվի նաև մշակութային այցեր և կինոժառանգության ցուցադրություն:

		Ծրագրի իրականացման համար նախատեսվում է համագործակցություն գերատեսչությունների և մասնագիտական կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ ԱԳՆ, ՀՀ ՍԳԳՀԳ, ՀԲԸՄ, ՀՀ Կինեմատոգրաֆիստների միություն, Հանրային հեռուստաընկերություն, ԵԹԿՊԻ, Երևանի քաղաքապետարան, Գործարար ոլորտ և այլն: Կինոարտադրողների համահայկական ֆորումին կմասնակցեն 8 հայազգի և օտարերկրյա ներկայացուցիչ արտերկրից, որից 5-ը կժամանեն Հայաստան, իսկ 3-ը կմիանան տեսակապով: Ֆորումին ընդգրկված են նաև Հայաստանում գործող փորձառու և սկսնակ կինոգործիչները: Հաշվի առնելով Հայկական սփյուռքի ներուժը այս ծրագիրը հանդիսանում է նպատակային՝ ոլորտի զարգացման համար:
3.2	Նպատակ	Կինոոլորտի զարգացման և բարեփոխման ծրագրերը համարվում են նպատակային՝ Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականության ռազմավարական գերակա ուղղությունների տեսանկյունից: Կինոարտադրող-ների համահայկական ֆորումի նպատակն է համախմբել համաշխարհային կինոարտադրության մեջ գործող, ազգությամբ հայ անվանի պրոդյուսերներին, ստեղծել համագործակցության հարթակ՝ հայկական կինոյի զարգացմանը նպաստելու համար: Ինչպես նաև նոր կապերի շնորհիվ միջազգայնացնել հայկական կինոարտադրանքն ու կինոժառանգությունը, խթանել մասնագիտական փորձառությունն ու կրթությունը, ձևավորել ժամանակակից մտածողու-թյուն՝ համաշխարհային կինոարտադրությանը ին-տեգրվելու համար:
3.3	Անցկացման ժամկետ	դեկտեմբերի 13 – դեկտեմբերի 15
3.4	Անցկացման վայր	Երևան
3.5	Ակնկալվող արդյունքներ	Կինոարտադրողների համահայկական ֆորումի արդյունքում կձևավորվի Հայաստան-Սփյուռք միասնական ծրագրերի պլանավորում՝ ի նպաստ կինոոլորտի բարեփոխումների, մշակութային տնտեսավարման, կինոարտադրանքի զարգացման և տարածման: Կխթանվեն կինոարտադրող և ներդրող կապերի ընդլայնման և համագործակցությունների ստեղծման գործընթացը:

3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Կինոարտադրողների համահայկական ֆորումին կմասնակցեն Հայաստանի կինոոլորտում գործող 150 և ավելի կինոգործիչներ, կներկայացվեն 19 և ավելի կինոնախագծեր, կցուցադրվի 1 կամ 2 հայկական կինոժառանգության նմուշներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024313 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Ն. Հարությունյան
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271
Տնօրենի պաշտոնակատար՝
Շ. Միրզախանյան
Կ.Տ.

Հավելված 2
«13» «12» 2019 թ.
N 539 պայմանագրի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

«Կինոարտադրողների համահայկական ֆորում» նախագծի կազմակերպման ծախսերի
(2019 թ. դեկտեմբերի 13-15)

N	Ծախսատեսակի անվանումը	Գումար (հ. դ.)
1.	**Աշխատանքի վարձատրություն** (ներառյալ հարկերը)՝ -համակարգող՝ 200.0 հ. դ. -գնումների համակարգող՝ 140.0 հ.դ. -կազմակերպիչ՝ 2 մարդ x 1,5 ամիս x 110.0 հ. դ. = 330.0 հ. դ. -դիզայներ՝ 200.0 հ. դ. -խմբագիր՝ 150.0 հ. դ. -թարգմանիչ (կատալոգի նյութերի)՝ 140.0 հ.դ. -սինխրոն թարգմանիչ (անգլերեն, ֆրանսերեն)՝ 2 մարդ x 2 օր x 6 ժամ x 22.0 հ.դ. = 528.0 հ. դ. -թարգմանիչ (հյուրերի հետ աշխատելու համար)՝ 4 օր x 40.0 հ. դ. = 160.0 հ. դ. -լուսանկարիչ՝ 3 օր x 30.0 հ. դ. = 90.0 հ. դ.	**1938.0**
2.	**Ճանապարհածախս, այդ թվում՝** Փարիզ -Երևան-Փարիզ՝ 3 ավիատոմս x 179423 դրամ = 538.3 հ. դ. Ալմա-Աթա-Երևան-Ալմա-Աթա՝ 1 ավիատոմս՝ 251.1 հ. դ. Բեռլին-Երևան-Բեռլին՝ 1 ավիատոմս՝ 232.7 հ. դ.	**1022.1**
3.	**Կեցության ծախսեր, այդ թվում՝** Սնունդ՝ 5 մարդ x 3 օր x 6.0 հ. դ. = 90.0 հ. դ. Հյուրանոց՝ 5 մարդ x 5 օր x 28.0 հ. դ. = 700.0 հ. դ.	**790.0**
4.	**Դահլիճի վարձակալություն, այդ թվում՝** դահլիճ «Կինոպարկ»՝ 70.0 հ.դ. դահլիճ նիստերի համար՝ 2 օր x 220.0 հ. դ.=440.0 հ. դ.	**510.0**
5.	**Տեխնիկայի վարձակալություն**, այդ թվում՝ -բարձրախոս՝ 5 հատ x 3 օր x 5.0 հ. դ. = 75.0 հ. դ. -աուդիոհամակարգ բարձրախոսի համար՝ 2 օր x 80.0 հ. դ. = 160.0 հ. դ. -ականջակալ՝ 140 հատ x 2 օր x 1.5 հ. դ. = 420.0 հ. դ. -խցիկ՝ սինխրոն թարգմանիչների համար՝ 1 հատ x 2 օր x 50.0 հ.դ. = 100.0 հ.դ. -էկրան 1 օր՝ 40.0 հ. դ.	**795.0**
6.	**Տպագրական ծախսեր**, այդ թվում՝ -պաստառ (1.80 սմ x 80 սմ)՝ 3 հատ x 30.0 հ. դ. = 90.0 հ. դ. -կատալոգ (55 էջ, գունավոր կավճապատ, օֆսեթ տպագրություն, 22 սմ x 15,5 սմ)՝ 150 հատ x 2800 դրամ = 420.0 հ. դ.	**510.0**
7.	**Կազմակերպչական ծախսեր, այդ թվում՝** -նոթատետր *(լոգոյով)*՝ 150 հատ x 890 դրամ = 133.5 հ. դ. -գրիչ *(լոգոյով)՝ 150 հատ* x 600 դրամ = 90.0 հ. դ.	**223.5**
8.	**Տրանսպորտային ծախս** *(վարձակալություն)*, **այդ թվում՝** -մարդատար *(դիմավորում և ճանապարհում)*՝ 6 անգամ x 10.0 հ. դ. = 60.0 հ. դ. -մարդատար *(9 տեղանոց)*՝ 3 օր x 20.0 հ. դ. = 60.0 հ. դ	**470.0**

	-ավտոբուս մշակութային այցերի համար (Էջմիածին, Զվարթնոց)՝ 50.0 հ. դ. -ավտոբուս *(40 տեղ.)*՝ 2 օր x 50.0 հ. դ. = 100.0 հ. դ. -տրանսպորտ ֆորումի աշխատանքները կազմակերպելու համար՝ 10 օր x 20.0 հ. դ. = 200.0 հ. դ.	
9.	**Սուրճի ընդմիջում** 206 մարդ x 2 օր x 1500 դրամ = 618.0 հ. դ	**618.0**
10	**Խրախուսական մրցանակ՝**	**500.0**
9.	ԱԱՀ	**1475.3**
	Ընդամենը	**8851.9**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024313 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271
Տնօրենի պաշտոնակատար՝

Շ. Միրզախանյան

Կ.Տ.